ՀԱՇՎԵՔՆՆԻՉ
ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
Կատարողականի հաշվեքննության
արդյունքների վերաբերյալ

Հաստատվել է Հաշվեքննիչ պալատի
2025 թվականի ապրիլի 15-ի N 27–Ա որոշմամբ

Օդի աղտոտվածության նվազեցում

Օդի աղտոտվածությամբ պայմանավորված վտանգում մահերի ճնշումն համար անհրաժեշտ է փոխարինել կառավարում ադեկվատ կոորդինացմամբ

ԿՀ-0004-25-03 **2025**

Հաշվեքննիչ պալատի առաքելությունն է՝ նպաստել հանրային կառավարումը **բարելավելուն**:

Դրան հասնելու համար Հաշվեքննիչ պալատն իրականացնում է հաշվեքննություններ, որոնց արդյունքում **ժամանակին, մասնագիտական և անկողմնակալ** տեղեկատվություն է տրամադրում հանրությանը, Ազգային ժողովին և Կառավարությանը:

Հաշվեքննիչ պալատը Հայաստանի Հանրապետությունում արտաքին պետական հաշվեքննության (հանրային հատվածում արտաքին աուդիտի) ոլորտում քաղաքականությունը մշակող, հաստատող և իրականացնող անկախ պետական մարմինն է: Յուրաքանչյուր տարի Հաշվեքննիչ պալատն ընդունում է իր գործունեության ծրագիրը՝ ելնելով հաշվեքննության առաջնահերթ ուղղություններից: Հաշվեքննությունների իրականացմամբ Հաշվեքննիչ պալատը գնահատում է հանրային միջոցների կառավարման օրինականությունը (ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություններ) և արդյունավետությունը (կատարողականի հաշվեքննություններ): Իր գործունեության ընթացքում Հաշվեքննիչ պալատը ղեկավարվում է թափանցիկության ու հաշվետվողականության արժեքներով և պարբերաբար հանրությանը, Ազգային ժողովին և Կառավարությանն է ներկայացնում հաշվետվություններ հանրային միջոցների կառավարման օրինականության և արդյունավետության վերաբերյալ: Հաշվեքննիչ պալատի առանցքային նպատակադրումն է՝ համակարգային խնդիրների վերհանման և լուծումների առաջարկների միջոցով նպաստել քաղաքացու կյանքում դրական փոփոխություններին:

Միջնաժամկետ հորիզոնում Հաշվեքննիչ պալատը նպատակադրել է՝ **մարդակենտրոն հաշվեքննությունների** միջոցով նպաստել մարդու պահանջմունքներն արդյունավետորեն հասցեագրող հանրային կառավարմանը և միջազգային լավագույն փորձին համահունչ՝ պետության **ինստիտուցիոնալ** կարողությունների զարգացմանը:

Այդ նպատակով իրականացվող կատարողականի հաշվեքննության առաջնահերթություններից է «Մարդուն շրջապատող **մաքուր** և անվտանգ միջավայրը»:

Հաշվեքննության առաջնահերթությունները սահմանվում են՝ ելնելով հաշվեքննության գործառույթի միջոցով հանրային շահին միտված հավելյալ արժեք ստեղծելու ներուժից, հիմնախնդրի էականությունից և հաշվեքննելիությունից: Միջնաժամկետ հորիզոնում արտաքին պետական հաշվեքննության 7 առաջնահերթություններն են հանդիսանալու՝ (1) Մարդուն մատչելի, հասանելի, որակյալ և դիմակայուն առողջապահությունը, (2) Մարդուն մատչելի և որակյալ ցկյանս կրթությունը, (3) Մարդուն շրջապատող մաքուր և անվտանգ միջավայրը, (4) Մարդուն մատչելի և արդյունավետ արդարադատությունը, (5) Արտահանմանը միտված, գիտահեն և մրցակցային տնտեսության զարգացումը, (6) Պետական ֆինանսների և սեփականության կառավարման ինստիտուտների զարգացումը, (7) Ներդաշնակ զարգացող համայնքները: Հաշվեքննության առաջնահերթություններին, ինչպես նաև յուրաքանչյուր առաջնահերթության շրջանակում ձևակերպված հաշվեքննության հիմնական ուղղություններին հնարավոր է ծանոթանալ «Հաշվեքննիչ պալատի 2025-2027թթ. առաջնահերթությունները» փաստաթղթում, որի էլեկտրոնային տարբերակը հասանելի է Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում. www.armsai.am:

Բովանդակություն

Հապավումներ **5**

Ամփոփագիր **6**

Ներածություն **7**

Հաշվեքննության արդյունքները **16**

Օդի որակի ՀՀ ստանդարտները չեն ապահովում օդի աղտոտվածությունից մարդու կյանքի ու առողջության բավարար պաշտպանություն 16

Առկա չեն ժամանակին, որակյալ և համապարփակ տվյալներ՝ օդի պահպանության արդյունավետ կառավարում իրականացնելու համար 23

Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում չի իրականացվել ռազմավարական կառավարում 30

Եզրակացություն **37**

Առաջարկություններ և արձագանք **38**

Հաշվեքննության մասին **45**

Հապավումներ

ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԿԶՆ	Կայուն զարգացման նպատակներ
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՊ	Հաշվեքննիչ պալատ
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՄՕՊՄՕ	«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենք
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍԹԿ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՎԿ	Վիճակագրական կոմիտե
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՖՆ	Ֆինանսների նախարարություն

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ԻՆՉՈ՞Ւ ԻՐԱԿԱՆԱՑՎԵՑ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ. Օդի աղտոտվածությունը մարդու առողջության վրա ազդող ամենամեծ բնապահպանական ռիսկն է աշխարհում: ԱՀԿ-ի համաձայն, օդի աղտոտվածության հետևանքով աշխարհում տարեկան գրանցվում է 6.7 մլն մարդու վաղաժամ մահ (որից 4.2 մլն-ը մթնոլորտային օդի աղտոտվածության հետևանքով): Մարդու առողջության վրա օդի աղտոտվածության առաջացրած վնասի արժեքը գնահատվում է տարեկան 8.1 տրիլիոն դոլար կամ համաշխարհային ՀՆԱ-ի 6.1%-ը:

Ըստ ԱՀԿ տվյալների, մթնոլորտային օդի աղտոտվածությանը վերագրվող մահերի ցուցանիշով (70 մահ 100,000 բնակչի հաշվով) Հայաստանը զբաղեցնում է 144-րդ տեղն աշխարհի 183 երկրների շարքում՝ գերազանցելով համաշխարհային միջինը 19%-ով, իսկ միջին եվրոպական ցուցանիշը՝ 2.6 անգամ: ՀՀ-ում օդի աղտոտվածության առաջացրած առողջական վնասի արժեքը գնահատվում է տարեկան 1.45 մլրդ դոլար կամ ՀՆԱ-ի 10.6%-ը[1]:

Ի՞ՆՉ ԱՐՁԱՆԱԳՐՎԵՑ. Օդի որակի ՀՀ ստանդարտները չեն ապահովում օդի աղտոտվածությունից մարդու կյանքի ու առողջության բավարար պաշտպանություն:

Հաշվեքննության հաջորդ արձանագրման համաձայն, առկա չեն եղել ժամանակին, որակյալ և համապարփակ տվյալներ՝ օդի պահպանության արդյունավետ կառավարում իրականացնելու համար:

Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում պետական կառավարման նպատակով չեն սահմանվել օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի ու ոլորտային արտանետումների կրճատման թիրախներ և դրանց հասնելու համակարգված միջոցառումներ:

Ի՞ՆՉ ԱՆԵԼ. Հաշվեքննության արդյունքներով Հաշվեքննիչ պալատը ներկայացրել է 7 առաջարկներ, որոնք ուղղված են մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հանրային կառավարումը միջազգային չափանիշներին համապատասխան բարելավելուն՝ վերջնարդյունքում օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի կրճատման նպատակին հասնելու հեռանկարով:

[1] Տվյալների և դրանց աղբյուրների վերաբերյալ մանրամասները ներկայացվում են հաջորդ բաժիններում:

Ներածություն

1. Օդի աղտոտվածությունը մարդու առողջության վրա ազդող ամենամեծ բնապահպանական ռիսկն է աշխարհում[2]: ԱՀԿ-ի համաձայն, օդի աղտոտվածության հետևանքով աշխարհում տարեկան գրանցվում է 6.7 մլն մարդու վաղաժամ մահ (որից 4.2 մլն-ը մթնոլորտային օդի աղտոտվածության հետևանքով)[3,4]: Գնահատվում է, որ օդի աղտոտվածությամբ պայմանավորված կորսված կյանքի տարիների թիվն աշխարհում կազմում է 192 մլն տարի[5]: Այն հանդիսանում է մահվան 2-րդ ռիսկի գործոնը՝ բարձր զարկերակային ճնշումից հետո[6]: Օդի աղտոտվածությանը բաժին է ընկնում թոքային հիվանդություններից մահերի 43%-ը, այդ թվում՝ թոքի քաղցկեղից մահերի 29%-ը, սրտային հիվանդություններից մահերի 25%-ը և ուղեղի կաթվածներից մահերի 24%-ը[7]: Այն բարձրացնում է դեմենցիայի ռիսկը 14%-ով[8]:

[2] ՄԱԿ-ի բնապահպանական ծրագիր. https://www.unep.org/explore-topics/air/about-air:

[3] Մթնոլորտային օդի աղտոտվածություն, հիմնական փաստեր, ԱՀԿ, 24.10.24թ., հասանելի ամենաթարմ տվյալները՝ 2019թ.-ի համար https://www.who.int/news-room/fact-sheets/detail/ambient-(outdoor)-air-quality-and-health#:~:text=The%20combined%20effects%20of%20ambient,premature%20deaths%20worldwide%20in%202019: Առողջության չափումների և գնահատման ինստիտուտի համաձայն, օդի աղտոտվածությամբ պայմանավորված մահերի թիվը 2021թ. կազմել է 8.08 միլիոն, Աղբյուր՝ https://www.healthdata.org/research-analysis/diseases-injuries-risks/factsheets/2021-air-pollution-level-2-risk:

[4] Եվրոպայի բնապահպանական գործակալության համաձայն, 2022թ. ԵՄ-ում օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի թիվը կազմել է 357 հազ., որից 239 հազ.-ը պայմանավորված է եղել $PM_{2.5}$-ով, 70 հազ.-ը՝ O_3-ով և 48 հազ.-ը NO_2-ով: Աղբյուր՝ Harm to human health from air pollution in Europe: burden of disease status, Briefing no. 21/2024.EN HTML: TH-01-24-018-EN-Q - ISBN: 978-92-9480-695-6 - ISSN: 2467-3196 - doi: 10.2800/3950756:

[5] The Global Burden of Diseases, Injuries, and Risk Factors Study (GBD) 2019, Institute for Health Metrics and Evaluation, https://www.healthdata.org/results/gbd_summaries/2019/air-pollution-level-2-risk:

[6] Հասանելի ամենաթարմ տվյալները՝ 2021թ.-ի համար: Աղբյուր՝ State of Global Air 2024. Special Report. Boston, MA:Health Effects Institute. 2024:

[7] First Global Conference on Air Pollution and Health, WHO. https://cdn.who.int/media/docs/default-source/air-pollution-documents/air-quality-and-health/conference-on-air-pollution-and-health/1_2_background-health_effects_background.pdf?sfvrsn=f5584678_9:

[8] https://www.healthdata.org/research-analysis/library/air-pollutions-link-dementia.

2. Մարդու առողջության վրա օդի աղտոտվածության առաջացրած վնասի արժեքը գնահատվում է տարեկան 8.1 տրիլիոն դոլար կամ համաշխարհային ՀՆԱ-ի 6.1%-ը[9]: Օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի հետևանքով տարեկան կորսվում է 228.5 մլրդ դոլար աշխատանքային եկամուտ[10]: Հետազոտություններով հիմնավորված է համարվում օդի աղտոտվածության նվազեցմանն ուղղվող գործողությունների ծախսարդյունավետությունը: Մասնավորապես, նման գործողություններից օգուտները կարող են գերազանցել ծախսերին ընդհուպ մինչև 30-ապատիկ անգամ[11]:

Ներդիր 1. Մթնոլորտային օդի աղտոտվածության ազդեցությունը մարդու առողջության վրա



Աղբյուր՝ *Healthy Environment, healthy lives: how the environment influences health and well-being in Europe, EEA Report, N21/2019, 2020, էջ 65:*

[9] The Global Health Cost of PM2.5 Air Pollution: A Case for Action Beyond 2021, World Bank, 2022 (տվյալները ներկայացված են 2019թ. համար, գնողունակության համարժեքով (PPP) ճշգրտված):
[10] Համաշխարհային բանկի տվյալների հենք, Adjusted savings: particulate emission damage (current US$) ցուցիչ, ամենաթարմ տվյալները՝ 2021թ. համար, 164 երկրների տվյալների հանրագումարը:
[11] Actions on Air Quality - A global Summary of Policies and Programmes to Reduce Air Pollution, United Nations Environment Programme, 2021, United Nations Environment Programme. Air Pollution in Asia and the Pacific: Science-based Solutions. Nairobi: United Nations Environment Programme, Asia Pacific Clean Air Partnership and Climate & Clean Air, 2018, Markandya, et al. Health co-benefits from air pollution and mitigation costs of the Paris Agreement: a modelling study. The Lancet Planetary Health, 2018, 2(3), 126–133. doi:10.1016/S2542-5196(18)30029-9, United States Environmental Protection Agency. The Benefits and Costs of the Clean Air Act from 1990 to 2020: Final Report. Washington, D.C.: United States Environmental Protection Agency Office of Air and Radiation, 2011., Impact Assessment annex to the Communication on Thematic Strategy on Air Pollution and the Directive on “Ambient Air Quality and Cleaner Air for Europe”, European Commission, 2005.

3. Համադրելի երկրների համեմատությամբ ՀՀ-ում մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը հարաբերականորեն բարձր է (Գծապատկեր 1)**:**

Գծապատկեր 1. Մթնոլորտային օդի միջին աղտոտվածությունը տարածաշրջանում և համադրելի երկրներում ($PM_{2.5}$ կախված մասնիկների կոնցենտրացիան – մկգ/մ^3)



Ծանոթություն. ՀՀ-ում պաշտոնապես $PM_{2.5}$ կախված մասնիկների մոնիթորինգ չի իրականացվել:

Աղբյուր՝ *Global Burden of Disease Study 2021. IHME, 2024, հասանելի ամենաթարմ տվյալները՝ 2020թ., www.healthdata.org:*

4. Հայաստանում մթնոլորտային օդի աղտոտվածությանը վերագրվող մահերի ցուցանիշը (70 մահ 100,000 բնակչի հաշվով) համաշխարհային միջինից բարձր է 19%-ով, իսկ միջին եվրոպականից՝ 2.6 անգամ և այդ ցուցանիշով Հայաստանը 183 երկրների շարքում 144-րդն է[12] (Գծապատկեր 2)**:** Հայաստանում ընդհանուր մահերի 12%-ը կամ յուրաքանչյուր 8-րդ մահվան դեպքը պայմանավորված է օդի աղտոտվածությամբ[13]: Այդ դեպքերի 80%-ն արտահայտվել են սրտի իշեմիկ հիվանդության և ուղեղի կաթվածի դրսևորմամբ, որոնց հաջորդել են շնչառական հիվանդություններն ու թոքերի քաղցկեղը (Գծապատկեր 3): Գնահատվում է, որ ՀՀ-ում օդի աղտոտվածությամբ պայմանավորված տարեկան մահվան դեպքերի արդյունքում կորսվում[14] է ավելի քան 55.8 հազ. մարդկային կյանքի տարի[15]:

Գծապատկեր 2. Մթնոլորտային օդի աղտոտմանը վերագրվող մահացության ցուցանիշը (100,000 բնակչի հաշվով)



Աղբյուր՝ *ՄԱԿ ԿԶՆ ցուցիչների տվյալների հենք, SH_AAP_ASMORT ցուցանիշ, հասանելի ամենաթարմ տվյալները՝ 2019թ., www.unstats.un.org:*

[12] ՄԱԿ ԿԶՆ ցուցիչների տվյալների հենք, SH_AAP_ASMORT ցուցանիշ, հասանելի ամենաթարմ տվյալները՝ 2019թ., www.unstats.un.org:

[13] Ըստ ԱՀԿ-ի տվյալների հենքի, 2019թ. (հասանելի ամենաթարմ տվյալները) մթնոլորտային օդի աղտոտվածությամբ պայմանավորված մահերի թիվը ՀՀ-ում կազմել է 3165: Ըստ ՎԿ-ի, 2019թ. ՀՀ-ում մահվան դեպքերի թիվը կազմել է 26186:

[14] Կյանքի տարիների կորստի ցուցանիշի նկարագրությունը՝ https://www.who.int/data/gho/indicator-metadata-registry/imr-details/159#:~:text=Years%20of%20life%20lost%20(YLL,of%20one%20year%20of%20life:

[15] Ambient air pollution attributable YLLs, www.who.int/data/gho, հասանելի ամենաթարմ տվյալները՝ 2019թ.:

5. Ըստ ԱՆ-ի և ՇՄՆ-ի, ազգային մակարդակում չեն իրականացվել գիտական հետազոտություններ, թե մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) որ նյութերն են ունենում առավելագույն վնասակար ազդեցություն *ՀՀ-ում* մարդու առողջության վրա: Չեն իրականացվել նաև հիմնական աղտոտիչների՝ ՀՀ-ում մարդու առողջության վրա ազդեցության գնահատումներ:

6. ՀՀ-ում օդի աղտոտվածության առաջացրած առողջական վնասի արժեքը գնահատվում է տարեկան 1.45 մլրդ դոլար (4.5 մլրդ դոլար գնողունակության համարժեքով) կամ ՀՆԱ-ի 10.6%-ը[16]: Օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի հետևանքով ՀՀ-ում տարեկան կորսվում է 38.7 մլն դոլար աշխատանքային եկամուտ[17]:

Գծապատկեր 3. Մթնոլորտային օդի աղտոտմանը վերագրվող մահերը Հայաստանում՝ ըստ հիվանդությունների (100,000 բնակչի հաշվով)



Աղբյուր՝ *ԱՀԿ տվյալների հենք, Burden of disease attributable to ambient air pollution ցուցանիշ, հասանելի ամենաթարմ տվյալները՝ 2019թ., www.who.int/data/gho:*

[16] The Global Health Cost of PM2.5 Air Pollution: A Case for Action Beyond 2021, World Bank, 2022 (տվյալները ներկայացված են 2019թ. համար):

[17] Համաշխարհային բանկի տվյալների հենք, Adjusted savings: particulate emission damage (current US$) ցուցիչ, հասանելի ամենաթարմ տվյալները՝ 2021թ. դրությամբ:

7. Հայաստանում մթնոլորտային արտանետումները վերջին տարիներին ունեցել են աճի միտում[18]: 2023թ. մթնոլորտային արտանետումները կազմել են 316.1 հազ. տ, որի 63.1%-ը բաժին է ընկել արտանետման շարժական, իսկ 36.9%-ը՝ անշարժ աղբյուրներին: Արտանետման անշարժ աղբյուրների քանակը կազմել է 3306, որոնց 75.9%-ն ունեցել են սահմանային թույլատրելի հաստատված չափորոշիչներ: Արտանետման անշարժ աղբյուրներից անջատված վնասակար նյութերի քանակը կազմել է 380.2 հազ. տ, որի 69.3%-ը որսվել է, իսկ մնացած 30.7%-ը՝ արտանետվել մթնոլորտ[19]: Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետման շարժական աղբյուրներ են հանդիսացել տրանսպորտային միջոցները:

Գծապատկեր 4. **(ա)** Արտանետման անշարժ և շարժական աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քանակը (հազ. տ.) և **(բ)** կառուցվածքը՝ ըստ անշարժ և շարժական աղբյուրների (%)

ա)



[18] Արտանետումների քանակի ցուցանիշը համապարփակ չէ, որին անդրադարձել ենք սույն ընթացիկ եզրակացության 31-32-րդ կետերում:
[19] Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2023թ, 2024, ՎԿ:

բ)



Աղբյուր՝ *Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2023թ., 2024, ՎԿ:*

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

8. Տվյալ հաշվեքննության նպատակն է՝ գնահատել մարդու առողջությունը օդի աղտոտվածությունից պաշտպանելուն ուղղված հանրային քաղաքականության միջոցառումների արդյունավետությունը և գնահատման արդյունքների հիման վրա ներկայացնել օդի պահպանության կառավարման համակարգի բարելավմանն ուղղված առաջարկություններ:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Հաշվեքննության առարկային վերաբերելի՝ պետության նպատակներն ու հանձնառությունները, որոնք տվյալ հաշվեքննության համար ծառայել են որպես բարձր մակարդակի (նպատակային արդյունավետության գնահատման) չափանիշներ, հետևյալն են.

9.1. **ՀՀ Սահմանադրության** համաձայն, պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունն ու բարելավումը (հոդվ. 12, մաս 1):

9.2. Մթնոլորտային օդի պահպանության կառավարումը ՀՀ-ում իրականացվում է **«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի** հիման վրա, որում որպես նպատակ է սահմանված մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովումը՝ այն աղտոտումից (բնական և տեխնածին) պաշտպանելու միջոցով (հոդվ. 3, մաս 1, կետ 1): Ելնելով ներկա և ապագա սերունդների շահերից՝ Հայաստանի Հանրապետությունը կիրառում է գիտականորեն հիմնավորված միջոցառումներ, որոնց նպատակն է՝ կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա վնասակար ներգործությունները... (Օրենքի նախաբան):

9.3. **ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգ[20]»-ի թիրախները ներառում են**՝ մինչև 2030թ. էականորեն կրճատել օդի աղտոտվածությունից մահերը (Թիրախ 3.9, ցուցիչ 3.9.1) և կրճատել քաղաքների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա մեկ շնչի հաշվով, այդ թվում՝ հատուկ ուշադրություն դարձնելով օդի որակին (Թիրախ 11.6, ցուցիչ 11.6.2):

9.4. ՀՀ-ԵՄ-ի Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի **(CEPA)** համաձայն, համագործակցությունը պետք է նպատակաուղղված լինի շրջակա միջավայրի պահպանությանը, պաշտպանությանը, բարելավմանը և որակի վերականգնմանը, մարդու առողջության պաշտպանությանը, բնական պաշարների կայուն օգտահանմանը և տարածաշրջանային կամ գլոբալ բնապահպանական հիմնախնդիրներին առնչվող՝ միջազգային մակարդակով ձեռնարկվող միջոցառումների խթանմանը, այդ թվում՝ *օդի որակի ոլորտում* (հոդվ. 46 (1) (b)), ինչպես նաև համագործակցությունը, ի թիվս այլոց, պետք է ընդգրկի նաև հետևյալ **նպատակները**՝ ՀՀ համար ոլորտային ռազմավարությունների մշակում (այդ թվում՝ գործողությունների իրականացման հստակ սահմանված ժամանակացույցները և հենանիշները, վարչական պատասխանատվությունները, ինչպես նաև՝ ենթակառուցվածքներում ու տեխնոլոգիաներում ներդրումների ֆինանսավորման ռազմավարությունները), որոնք առնչվում են՝ *օդի որակին* (հոդվ. 48 (b) (i)):

9.5. ՀՀ-ն վավերացրել է **ՄԱԿ-ի «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիան** («օդի կոնվենցիա»), որով և իր արձանագրություններով[21] երկրները պատրաստակամություն են հայտնում պաշտպանել մարդուն և իրեն շրջապատող միջավայրը օդի աղտոտումից և ձգտում են որքան հնարավոր է սահմանափակել և կանխել օդի աղտոտումը...:

[20] Transforming our world: The 2030 Agenda for Sustainable Development. Resolution 70/1 adopted by the General Assembly on 25 September 2015.

[21] Նշվածներից Հայաստանի Հանրապետությունը չի վավերացրել «Ծանր մետաղների մասին», «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» և «Թթվայնեցման, էվտրոֆիկացիայի և գետնամերձ օզոնի դեմ պայքարի մասին (Գյոթեբորգի)» արձանագրությունները:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ

10. Հաշվեքննությունը կենտրոնացել է օդի որակի բարելավման համակարգի հետևյալ բաղադրիչների վրա՝

- **մարդու կյանքի ու առողջության վրա**[22] **մթնոլորտային օդի**[23] աղտոտվածության ունեցած բացասական ներգործության վրա.
- **տվյալների** հասանելիության, դրանց որակի, համապարփակության և ժամանակին լինելու վրա.
- հանրային կառավարման տարբեր մարմիններ գործողությունների **կոորդինացման** վրա:

11. Հաշվեքննության հարցերը, ժամկետները, մոտեցումը և մեթոդաբանական այլ մանրամասները ներկայացված են **«Հաշվեքննության մասին»** բաժնում:

ԻՆՉՈ՞Ւ Է ԱՅՆ ԷԱԿԱՆ

12. Հաշվեքննության նշված կենտրոնացման էականությունը պայմանավորող գործոններն են՝

- **Տվյալահեն (ապացույցների վրա հիմնված) քաղաքականության** մշակումից և իրականացումից է կախված օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի կրճատման թիրախների ապահովումը:
- **Համապետական մոտեցում** (whole-of-government approach) – նկատի ունենալով մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հանրային կառավարման գործառույթների և դրանք իրականացնող հանրային կառավարման մարմինների մեծաթիվ լինելը, դրանց ջանքերը կարող են ներդաշնակեցվել կոորդինացման (հորիզոնական և ուղղահայաց) իրավական մեխանիզմի շրջանակում:

[22] Թեև էականության սկզբունքից ելնելով հաշվեքննությունը կենտրոնացել է մարդու կյանքի ու առողջության վրա մթնոլորտային օդի ազդեցության վրա, հաշվեքննության առաջարկների իրագործմամբ օդի որակի բարելավման դրական ազդեցությունը վերաբերելի կլինի ինչպես մարդուն, այնպես էլ՝ շրջակա միջավայրին:

[23] Ըստ ԱՀԿ-ի տվյալների հենքի, 2019թ. (հասանելի ամենաթարմ տվյալները) ՀՀ-ում օդի աղտոտվածությամբ պայմանավորված մահերի կառուցվածքում մթնոլորտային օդին բաժին է ընկնում մահերի 92.5%-ը:

Հաշվեքննության արդյունքները

Օդի որակի ՀՀ ստանդարտները չեն ապահովում օդի աղտոտվածությունից մարդու կյանքի ու առողջության բավարար պաշտպանություն

ԻՆՉՈ՞Ի Է ՏՎՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԿԱՐԵՎՈՐ

13. Մթնոլորտային օդի որակի ստանդարտները հանդիսանում են այն ուղենիշները, որոնք պետք է ապահովվեն օդի պահպանության կառավարման համակարգի գործունեության արդյունքում: Գիտականորեն հիմնավորված մակարդակներից ավելի թույլ ստանդարտների հետևանքով հնարավոր չէ պլանավորել օդի աղտոտվածության նվազեցման միջոցառումների այնպիսի ամբողջություն, որոնց համախառն ազդեցությունը թույլ տա կառավարել մարդու առողջության վրա օդի աղտոտվածության բացասական ներգործությունները: **Այլ կերպ ասած, թույլ ստանդարտներին համապատասխանությունը չի երաշխավորի օդի պահպանության բնագավառում սահմանված նպատակների ապահովում:**

ՊԱՏՃԱՌՆԵՐ

14. Հաշվեքննության տվյալ արդյունքը պայմանավորող հիմնական պատճառներն են՝

- ՀՀ ստանդարտները չեն համապատասխանում խնդրո առարկային վերաբերելի գիտական հետազոտություններով հիմնավորված՝ ԱՀԿ-ի ուղեցույցներով նախատեսված մակարդակներին և ցուցանիշներին:

- Սահմանված ՍԹԿ-ների հիմքում դրված չեն նաև ՀՀ-ում իրականացված գիտական հետազոտություններ, որոնք կհիմնավորեին, որ գործող ՍԹԿ-ներն ապահովում են, որ մթնոլորտային օդում աղտոտող (վնասակար) նյութի տվյալ առավելագույն պարունակությունը չգերազանցելու դեպքում ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգործելիս նյութը մարդու առողջության վրա բացասական ազդեցություն չի գործի:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

15. ՄՕՊՄՕ-ում որպես նպատակ է սահմանված **մարդու առողջության** և շրջակա միջավայրի **համար** բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովումը՝ այն աղտոտումից (բնական և տեխնածին) պաշտպանելու միջոցով:

Աղբյուր՝ ՄՕՊՄՕ, հոդվ. 3, մաս 1, կետ 1:

16. Ելնելով ներկա և ապագա սերունդների շահերից՝ Հայաստանի Հանրապետությունը կիրառում է **գիտականորեն հիմնավորված միջոցառումներ**, որոնց նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա վնասակար ներգործությունները...

Աղբյուր՝ ՄՕՊՄՕ, նախաբան:

17. Մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան մթնոլորտային օդում աղտոտող (վնասակար) նյութի այն **առավելագույն** պարունակությունն է, որը չգերազանցելու դեպքում այդ նյութը ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգործելիս **բացասական ազդեցություն չի գործում մարդու առողջության** և բնական ու մարդածին շրջակա միջավայրի վրա:

Աղբյուր՝ ՄՕՊՄՕ, հոդվ. 4, մաս 1, կետ 15:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿ

18. Աշխարհում առկա՝ մարդու առողջության վրա օդի աղտոտվածության ազդեցության գնահատման գիտական հետազոտություններն ամփոփող ամենահեղինակավոր փաստաթուղթը՝ ԱՀԿ-ի համաշխարհային օդի որակի ուղեցույցն է, որով սահմանված են հիմնական աղտոտիչների գծով վերջնական և միջանկյալ թիրախային մակարդակները:

19. ՀՀ-ում ՍԹԿ-ների տարեկան նորմատիվներ սահմանված չեն: Միջին օրական նորմատիվներին զուգահեռ, սահմանված չէ տարվա ընթացքում օրերի թույլատրելի սահմանափակում, երբ միջին օրական նորմատիվները կարող են գերազանցվել:

20. Ըստ ԱՀԿ-ի ուղեցույցների, հիմնական վնասակար նյութի՝ $PM_{2.5}$-ի տարեկան կոնցենտրացիայի վերջնական թիրախը 5 մգ/մ^3 է՝ դրան հասնելու միջանկյալ 35, 25, 15 և 10 մգ/մ^3 թիրախներով, իսկ միջին օրական կոնցենտրացիայի վերջնական թիրախը 15 մգ/մ^3 է՝ 75, 50, 37.5 և 25 մգ/մ^3 միջանկյալ թիրախներով: Սակայն զուգահեռ սահմանվում է, որ միջին օրական ցուցանիշը պետք է ապահովվի 99-րդ պերցենտիլով, այսինքն՝ տարեկան թույլատրելի գերազանցումները կարող են լինել 3-4 օր միայն: ՀՀ-ում $PM_{2.5}$-ի գծով ՍԹԿ-ի միջին օրական նորմատիվը 35 մգ/մ^3 է: Տարեկան նորմատիվի, ինչպես նաև տարվա ընթացքում օրական նորմատիվի գերազանցումների թույլատրելի քանակի կարգավորումների բացակայության պայմաններում, տարվա բոլոր օրերին մինչև 35 մգ/մ^3 կոնցենտրացիան, այսինքն՝ միջին տարեկան՝ 35 մգ/մ^3 ցուցանիշը կհամարվի նորմատիվին բավարարող, որը, սակայն, գերազանցում է ԱՀԿ ստանդարտը **7-ապատիկ անգամ**:

21. Ըստ ՇՄՆ-ի, ՀՀ-ում ՍԹԿ-ները սահմանվել են ՌԴ-ում գործող համանուն ստանդարտի հիման վրա[24]: ԱՆ-ից ստացված տեղեկատվության համաձայն, ՀՀ-ում իրականացված, ՀՀ տարածքին վերաբերելի գիտական հետազոտություններից բխող հիմնավորումներ տվյալ նորմատիվների հիմքում չեն դրվել: Նշված նորմատիվներն ավելի թույլ են, քան գիտականորեն հիմնավորված ԱՀԿ թիրախները: Օրինակ, Երևանի Կոմիտասի պողոտայում տեղադրված դիտակետի տվյալներով, 2024 թվականին ազոտի երկօքսիդի գծով ՀՀ-ում գործող ՍԹԿ-ն գերազանցվել է տարվա օրերի 1%-ի դեպքում, իսկ ԱՀԿ թիրախի համեմատ, որը ենթադրում է մարդու առողջության պաշտպանվածության ընդունելի մակարդակ, գերազանցումները եղել են տարվա օրերի 13%-ի դեպքում[25]:

22. Արդյունքում, ՀՀ-ում գործող ստանդարտների ամբողջությամբ բավարարելն անգամ չի ապահովի մարդու առողջության վրա բացասական ազդեցությունից պաշտպանություն:

[24] ГН 2.1.6.1338-03 «Предельно допустимые концентрации (ПДК) загрязняющих веществ в атмосферном воздухе населенных мест» (приложение), и поправки, «Перечень и коды веществ, загрязняющих атмосферный воздух» 2010г.

[25] Քանի որ կախված մասնիկների պաշտոնական մոնիթորինգ ՀՀ-ում չի իրականացվել, իսկ մոնիթորինգի ենթարկված չտարբերակված փոշու ցուցանիշն ԱՀԿ կողմից չի համարվում որպես նշանակալի ցուցանիշ, ազգային և միջազգային ստանդարտների համեմատություն փոշու մասով չի կարող իրականացվել:

Աղյուսակ 1. Օդի որակի միջազգային և ազգային ստանդարտները

Աղտոտող նյութ – միջին ժամկետ	ՀՀ նորմատիվ	ԱՀԿ վերջնական թիրախ	ԱՀԿ միջանկյալ թիրախներ			
			I	II	III	IV
Կախված մասնիկներ $PM_{2.5}$ - տարեկան	Սահմանված չէ	5	35	25	15	10
Կախված մասնիկներ $PM_{2.5}$ – օրական[ա]	35	15	75	50	37.5	25
Կախված մասնիկներ PM_{10} - տարեկան	Սահմանված չէ	15	70	50	30	20
Կախված մասնիկներ PM_{10} – օրական[ա]	60	45	150	100	75	50
Ազոտի երկօքսիդ NO_2- տարեկան	Սահմանված չէ	10	40	30	20	-
Ազոտի երկօքսիդ NO_2– օրական[ա]	40	25	120	50	-	-
Ծծմբի երկօքսիդ SO_2 - օրական[ա]	50	40	125	50	-	-
Օզոն O_3 - Պիկ սեզոն	Սահմանված չէ	60	100	70	-	-
Օզոն O_3 – 8-ժամյա[ա]	Սահմանված չէ	100	160	120	-	-
Ածխածնի օքսիդ CO - օրական[ա]	3	4	7	-	-	-

Գծապատկեր 5. ՀՀ և ԱՀԿ ստանդարտների միջև խզումը



[ա] Ըստ ԱՀԿ-ի, 99-րդ պերցենտիլով, այսինքն տարեկան 3-4 օր գերազանցում: Նման պահանջ ՀՀ-ում առկա չէ:

Օզոնին վերաբերելի ԱՀԿ թիրախները միջին օրական չեն: Նման համադրելի ցուցանիշներ ՀՀ-ում սահմանված չեն: ՀՀ-ում սահմանված է միջին օրական 0.03մգ/մ^3 միջին օրական ցուցանիշ, որը, սակայն միջազգայնորեն չի դիտարկվում որպես օդի որակի ստանդարտի ցուցանիշ:

Չափման միավորը՝ մկգ/մ^3, բացառությամբ CO-ի, որի դեպքում՝ մգ/մ^3:

Աղբյուր՝ *Air Quality Guidelines, WHO, 2021, Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին» N 160-Ն որոշում:*

Աղյուսակ 2. Օդի որակի մոնիթորինգի արդյունքները՝ միջազգային և ազգային ստանդարտների համեմատությամբ

	ՀՀ նորմատիվներից շեղմամբ օրերի թիվ	ԱՀԿ թիրախներից շեղմամբ օրերի թիվ	ՀՀ նորմատիվներից շեղմամբ օրերի տես. կշիռ	ԱՀԿ թիրախներից շեղմամբ օրերի տես. կշիռ
Երևան-AS1 /Կոմիտասի պողոտա 29/				
Ազոտի երկօքսիդ	2	45	1%	13%
Ծծմբի երկօքսիդ	4	25	1%	7%
Երևան-AS18 /Լուսավորիչ-Ագաթանգեղոս խաչմերուկ/				
Ազոտի երկօքսիդ	40	127	11%	35%
Ծծմբի երկօքսիդ	2	27	1%	8%
Երևան-AS2 /Արշակունյանց պողոտա 135/10/				
Ազոտի երկօքսիդ	7	78	2%	22%
Ծծմբի երկօքսիդ	2	16	1%	4%
Երևան-AS8 /Գայի պողոտա 32/				
Ազոտի երկօքսիդ	23	112	6%	31%
Ծծմբի երկօքսիդ	3	27	1%	8%

Աղբյուր՝ *ՇՄՆ-ից ստացված՝ մոնիթորինգի տվյալներ:*

Ներդիր 2. ԵՄ օդի որակի ստանդարտների վերանայման դրական գործելակերպեր

2021 թվականին ԱՀԿ-ի կողմից օդի որակի ստանդարտների վերանայումից հետո ԵՄ-ն նախաձեռնեց 2008 թվականից գործող ԵՄ օդի որակի ստանդարտների (ԵՄ դիրեկտիվ 2008/50/EC) վերանայման գործընթաց: Վերանայման հիմքում դրվեց Եվրոպական հանձնաժողովի հանձնառությունը՝ մոտարկելու ԵՄ օդի որակի ստանդարտներն ԱՀԿ առաջարկություններին: Դիրեկտիվի վերանայման առաջարկում ընդգծվեց 2030 թվականից հետո ԱՀԿ Օդի որակի 2021թ. ուղեցույցներին ամբողջությամբ մոտարկման հեռանկարը՝ առավելագույնը մինչև 2050 թվականը հասնելու համար աղտոտումից զերծ լինելու տեսլականին, երբ օդի աղտոտվածությունը կնվազեցվի մինչև այնպիսի մակարդակ, որ այլևս վտանգավոր չի համարվի առողջության և բնական էկոհամակարգերի համար: Նշված մոտեցումը համահունչ է ԱՀԿ-ի կողմից առաջարկվող միջանկյալ թիրախների սահմանման սկզբունքին: Վերանայված դիրեկտիվն (ԵՄ դիրեկտիվ 2024/2881) ուժի մեջ մտավ 2024թ. դեկտեմբերին: Մասնավորապես, նախատեսվեցին սահմանային արժեքների աստիճանաբար խստացումներ մինչև 2026թ. և մինչև 2030թ. ընկած ժամանակահատվածի համար (Վերանայված դիրեկտիվի հավելված 1): Միևնույն ժամանակ, սահմանվեց, որ «Անդամ պետությունները պետք է ջանքեր գործադրեն՝ հասնելու և պահպանելու մթնոլորտային օդի լավագույն որակը և ապահովելու մարդու առողջության ու շրջակա միջավայրի բարձր մակարդակի պաշտպանությունը՝ նպատակ ունենալով իրականացնել զրո աղտոտվածության նպատակը, ինչպես նշված է Հոդված 1-ի (1) կետում՝ [վերջինս ենթադրում է նպատակին հասնել առավելագույնը մինչև 2050թ.] համաձայն ԱՀԿ առաջարկությունների և Հավելված II-ով սահմանված գնահատման շեմերից ցածր մակարդակով» (Վերանայված դիրեկտիվի հոդված 12-ի 4-րդ մաս):

Աղտոտող նյութ – միջին ժամկետ	Սահմանային արժեքներ մինչև 11.12.26թ.	Սահմանային արժեքներ մինչև 01.01.30թ.	Շեմեր մինչև 2050թ.**
Կախված մասնիկներ $PM_{2.5}$ - տարեկան	25	10	5
Կախված մասնիկներ $PM_{2.5}$ – օրական	Սահմանված չէ	25 Չպետք է գերազանցվի տարեկան ավելի քան 18 անգամ	-
Կախված մասնիկներ PM_{10} - տարեկան	40	20	15
Կախված մասնիկներ PM_{10} – օրական	50 Չպետք է գերազանցվի տարեկան ավելի քան 35 անգամ	45 Չպետք է գերազանցվի տարեկան ավելի քան 18 անգամ	-
Ազոտի երկօքսիդ NO_2- տարեկան	40	20	10
Ազոտի երկօքսիդ NO_2– օրական	Սահմանված չէ	50 Չպետք է գերազանցվի տարեկան ավելի քան 18 անգամ	-
Ծծմբի երկօքսիդ SO_2 - օրական	125 Չպետք է գերազանցվի տարեկան ավելի քան 3 անգամ	50 Չպետք է գերազանցվի տարեկան ավելի քան 18 անգամ	40
Ծծմբի երկօքսիդ SO_2 - տարեկան	Սահմանված չէ	20	-
Ածխածնի օքսիդ CO - օրական	Սահմանված չէ	4 Չպետք է գերազանցվի տարեկան ավելի քան 18 անգամ	4

** Սահմանված են Դիրեկտիվի Հավելված 1-ով:*

*** Սահմանված են Դիրեկտիվի Հավելված 2-ով և պետք է գործեն Դիրեկտիվի հոդված 12-ի 4-րդ մասի համաձայն:*

Չափման միավորը՝ մկգ/մ3, բացառությամբ CO-ի, որի դեպքում՝ մգ/մ3:

Աղբյուր՝ *Proposal for a directive of the European Parliament and of the Council on ambient air quality and cleaner air for Europe (recast), Brussels, 26.10.2022 COM(2022) 542 final/2, 2022/0347(COD), Directive (EU) 2024/2881:*

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շրջակա միջավայրի նախարարությանը

23. Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի՝ ՀՀ-ում գործող ստանդարտների կազմն ու մակարդակը ներդաշնակեցնել ԱՀԿ-ի ուղեցույցներով առաջարկվող գիտականորեն հիմնավորված կազմին ու մակարդակներին՝ ըստ անհրաժեշտության ԱՀԿ-ի ուղեցույցներով առաջարկվող միջանկյալ թիրախների հիման վրա սահմանելով անցումային ժամկետներ *(Առաջարկություն N 1)*:

Առկա չեն ժամանակին, որակյալ և համապարփակ տվյալներ՝ օդի պահպանության արդյունավետ կառավարում իրականացնելու համար

ԻՆՉՈ՞Ւ Է ՏՎՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԿԱՐԵՎՈՐ

24. Մթնոլորտային օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի նվազեցման համար հասցեական և ծախսարդյունավետ միջոցառումների պլանավորումն ու իրականացումը պահանջում է որակյալ և համապարփակ տվյալների առկայություն:

25. Միևնույն ժամանակ, օդի աղտոտվածությունից արդյունավետ պաշտպանության համար (հատկապես բնակչության խոցելի խմբերի շրջանում՝ տարեցներ, երեխաներ, շնչառական և այլ քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք) անհրաժեշտ են իրական ժամանակում տվյալներ ու կանխատեսումներ:

ՊԱՏՃԱՌՆԵՐ

26. Հաշվեքննության տվյալ արդյունքը պայմանավորող հիմնական պատճառներն են՝

- Առկա չեն համապարփակ տվյալներ մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակի մասին (համապարփակ գույքագրում):
- Մթնոլորտային օդի մոնիթորինգի ՀՀ դիտացանցն արդիական չէ:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

27. **Կառավարության 2021-2026թթ. ծրագրի համաձայն** (4.10-րդ կետ). «շրջակա միջավայրի կառավարման առաջնահերթ ուղղություններից է լինելու բնապահպանական օրենսդրության ներդաշնակեցումը ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի հրահանգներին… մթնոլորտային օդի պահպանության քաղաքականության մշակումը՝ ուղղված արտանետումների նվազեցմանն ու սահմանափակմանը, հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մշտադիտարկման համակարգի արդիականացումը՝ դիտարկումների նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ, շրջակա միջավայրի պահպանության վերահսկողության և մշտադիտարկման միասնական համակարգի կատարելագործումը…, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարումը…»:

28. Մթնոլորտային օդի աղտոտման հսկման, համապարփակ գնահատման և մթնոլորտային օդի վիճակի փոփոխության կանխատեսման նպատակով կազմակերպվում և իրականացվում է մթնոլորտային օդի պետական մոնիտորինգ:

Աղբյուր՝ ՄՕՊՄՕ, հոդվ. 16, մաս 2:

29. «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության խնդիրներից է՝ պլանավորված, **միջազգային ստանդարտներին** ու միասնական ցուցանիշներին համապատասխան **շրջակա միջավայրի** … մոնիթորինգի ապահովումը:

Աղբյուր՝ Շրջակա միջավայրի նախարարի 28.04.2020թ. թիվ 125-Լ հրամանով հաստատված «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 11-րդ կետի 1-ին ենթակետ:

30. Ազգային արտանետումների գույքագրման արդյունքները պետք է լինեն… ամբողջական:

Աղբյուր՝ ԵՄ դիրեկտիվ 2016/2284, հավելված 4, մաս 1, կետ 1:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿ

31. ՀՀ պաշտոնական վիճակագրությունը չի պարունակում համապարփակ տվյալներ մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակի մասին: ՀՀ պաշտոնական վիճակագրությունը ներառում է տվյալներ այն անշարժ աղբյուրների մասով (կազմակերպությունների / անհատ ձեռնարկատերերի ներկայացրած վարչական վիճակագրական հաշվետվությունների[26] հիման վրա), որոնց նախագծային առավելագույն արտանետումները բավարարում են օդի պահանջվող օգտագործմանը, որը *մեծ է 200 մլն խոր. մ/տարի* ծախսից, ինչպես նաև շարժական աղբյուրներից արտանետված վնասակար նյութերի քանակի վերաբերյալ[27] (Գծապատկեր 4): Մնացյալ մասով պաշտոնական հաշվառում չի իրականացվում:

[26] «Անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի մասին» Ձև N 2-տա (օդ) (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվությունը ներկայացնում են իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, որոնք ունեն մթնոլորտային արտանետումների անշարժ աղբյուրներ, և դրանց **նախագծային առավելագույն արտանետումները** բավարարում են օդի պահանջվող օգտագործմանը, որը մեծ է 200 մլն խոր. մ/տարի ծախսից: Աղբյուր՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2002 թվականի օգոստոսի 22-ի թիվ 111-Ն հրամանի հավելված 2-ի կետ 2: 2025 թվականի հունվարի դրությամբ մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործություն ունեցող պետական հաշվառման ենթակա գործող կազմակերպությունների ցանկում ընդգրկված է եղել 2218 կազմակերպություն / անհատ ձեռնարկատեր: Աղբյուր՝ Շրջակա միջավայրի նախարարի 2025թ. հունվարի 14-ի թիվ 10-Ա հրաման:

[27] Շարժական աղբյուրներից արտանետումների գույքագրումն իրականացվում է ներմուծված վառելիքի հիման վրա:

32. Համապարփակ գույքագրումը, այդ թվում ՀՀ-ում չհաշվառվող աղբյուրների համար ենթակա է իրականացման «Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիայի շրջանակում: Այնուհանդերձ, գույքագրման 2024թ. արդյունքների համաձայն, բացակայել են տվյալներ այնպիսի աղբյուրների մասով, ինչպիսիք են օրինակ՝ անօրգանական պարարտանյութերից, կենդանական ծագման օրգանական պարարտանյութերից, գյուղատնտեսական մնացորդների դաշտային այրումից (գյուղատնտեսություն), տնային տնտեսություններից և այգեգործությունից (շարժական), թափոններից (այդ թվում՝ թափոնների բաց այրումից), արդյունաբերության մի շարք ճյուղերից, ճանապարհների ասֆալտապատումից արտանետումները և այլն[28]: Օրինակ, ԵՄ-ում մթնոլորտ արտանետումների կառուցվածքն ըստ տնտեսության հատվածների, ունի հետևյալ տեսքը.

Աղյուսակ 3. Մթնոլորտային օդ արտանետումների կառուցվածքը ԵՄ-ում՝ ըստ աղբյուրների ու աղտոտիչների

	Էներգիայի արտադրություն և բաշխում	Էներգիայի օգտագործում արդյունաբերությունում	Ճանապարհային տրանսպորտ	Այլ տրանսպորտ	Տնային տնտեսություններ, առևտրային և ինստիտուցիոնալ հատված	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Թափոններ
PM_{10}	6%	5%	12%	2%	40%	17%	17%	1%
$PM_{2.5}$	5%	7%	13%	2%	56%	10%	5%	2%
NOx	20%	13%	39%	7%	14%	3%	4%	0%
SOx	57%	18%	0%	2%	16%	7%	0%	0%
NH_3	0%	0%	1%	0%	1%	1%	94%	2%
NMVOC	9%	2%	11%	1%	16%	49%	11%	1%

Աղբյուր՝ Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին կոնվենցիայի շրջանակում վնասակար նյութերի մթնոլորտ արտանետումների գույքագրման արդյունքներ, հաշվետվություններ:

[28] Աղբյուր՝ Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին կոնվենցիայի շրջանակում վնասակար նյութերի մթնոլորտ արտանետումների գույքագրման արդյունքներ, 2024թ. հաշվետվություն, աղյուսակ 28:

33. Ըստ աղբյուրների, մթնոլորտ արտանետումների համապարփակ գույքագրման բացակայության պայմաններում, սահմանափակվում է աղտոտվածության նվազեցման հասցեական միջոցառումների պլանավորման և իրականացման հնարավորությունը: Բացի այդ, արտանետումների կրճատման տարբեր սցենարներ կարող են ունենալ տարբեր «գին»՝ ծախսեր հանրային ֆինանսների, բիզնեսների ու տնային տնտեսությունների համար: Գույքագրման համապարփակ արդյունքներն անհրաժեշտ են սցենարային վերլուծությունների միջոցով ամենածախսարդյունավետ սցենարների մշակման և օդի որակի բարելավման ռազմավարությունները / միջոցառումների ծրագրերը այդ հենքի վրա կառուցելու համար:

34. Այն տարածքներում, որտեղ օդի որակի մոնիթորինգ չի իրականացվում, որպես օդի որակի մոնիթորինգին աջակցող մեթոդ[29], չի կիրառվել նաև օդի որակի մոդելավորում[30]:

35. Մթնոլորտային օդի մոնիթորինգի ՀՀ դիտացանցն արդիական չէ՝ սահմանափակելով մթնոլորտային օդն աղտոտող վնասակար նյութերի վերաբերյալ համապարփակ, ժամանակին և որակյալ տվյալների ստացման հնարավորությունը:

36. Մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 15 ակտիվ և ավտոմատ հիմնական անշարժ և 214 շարժական (պասիվ) նմուշառման դիտակետից[31]: Դիտացանցը ձևավորվել է խորհրդային շրջանում և չի բավարարում արդի չափանիշներին:

[29] Մթնոլորտային օդի որակի գնահատումն իրականացվում է աղտոտվածության չափման, ստանդարտացված չափման կամ մոդելավորման մեթոդներով, «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մաս:

[30] ՇՄՆ 16.07.2024թ. թիվ 1/05.4/7713-2024 գրություն:

[31] ՀՀ հիդրոօթերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների մասին տեղեկագիր, 2023թ. 4-րդ եռամսյակ:

Աղյուսակ 4. Մթնոլորտային օդի մոնիթորինգի ՀՀ դիտացանցը

Քաղաք	Դիտակետի/ Դիտակայանի համար (ակտիվ)	Տեղակայման վայր	Շահագործման հանձնելու ամսաթիվ
Ալավերդի	Ալավերդի-AS1	Սայաթ Նովա փողոց	1972
Ալավերդի	Ալավերդի-AS2	Սանահին սարահարթ, Գայի պողոտա 1/11	1972
Ալավերդի	Ալավերդի-AS3	Դեբեդ թաղամաս,Դեբեդի 10	2008
Ծաղկաձոր	Ծաղկաձոր-AS1	Սարալանջի 9	2007
Արարատ	Արարատ-AS1	Ցեմենտագործների 5, տ.5	1983
Հրազդան	Հրազդան-AS1	Ջրառատ թաղամաս, 409Ա	1983
Երևան	Երևան-AS1	Կոմիտասի պողոտա 29	1980
Երևան	Երևան-AS8	Գայի պողոտա 32	1980
Երևան	Երևան-AS2	Արշակունյանց պողոտա 135/10	1980
Երևան	Երևան-AS18	Լուսավորիչ-Ագաթանգեղոս խաչմերուկ	1991
Երևան	Երևան-AS7	Խանջյան 51	1980
Գյումրի	Գյումրի-AS1	Նժդեհի 1/2	1984
Վանաձոր	Վանաձոր-AS1	Դիմաց թաղամաս, Ծատուրյան 53	1983
Վանաձոր	Վանաձոր-AS2	Հերացու 24ա	1983
Վանաձոր	Վանաձոր-AS3	Քիմիագործների թաղամաս, Վարդանանց 10	1983

Աղբյուր՝ ՇՄՆ:

37. Արձանագրվել է, որ.

- **մարդու առողջության վրա ազդեցության ու վաղաժամ մահերի առաջացման տեսանկյունից ամենամեծ վտանգավորությունն ունեցող $PM_{2.5}$ մասնիկների մոնիթորինգ չի իրականացվել**[32]: Չի իրականացվել նաև PM_{10} մասնիկների մոնիթորինգ: Փոխարենը իրականացվել է չտարբերակված փոշու մոնիթորինգ: Թեև վերջին ժամանակահատվածում Երևանի քաղաքապետարանի պահանջով շինարարական հրապարակներում տեղադրվել են $PM_{2.5}$ մասնիկների կոնցենտրացիաների գնահատման սարքավորումներ[33], դրանք չեն բավարարում պաշտոնական մոնիթորինգի սարքավորումների չափանիշներին, ինչպես նաև չեն անցել ստուգաճշտում:
- **իրական ժամանակում օդի աղտոտվածության վերաբերյալ տվյալներ հասանելի չեն եղել:** ՀՀ-ում աղտոտիչների վերաբերյալ հրապարակվում են շաբաթական տվյալներ՝ շաբաթվա ավարտից երկու օր անց[34]: Ըստ միջազգային չափանիշների, անհրաժեշտ է օդի աղտոտիչների վերաբերյալ տեղեկատվության՝ իրական ժամանակում հասանելիության ապահովման համակարգի առկայություն, որպեսզի մարդու առողջության համար օդի աղտոտվածության վտանգավոր մակարդակի պայմաններում քաղաքացիները կարողանան ճշգրտել իրենց վարքագիծը.
- **չեն իրականացվել օդի աղտոտվածության կանխատեսումներ**, որոնք թույլ կտային հատկապես բնակչության խոցելի խմբերին խուսափել օդի աղտոտվածության բացասական ազդեցություններից կամ ձեռնարկել պաշտպանական միջոցառումներ:
- անհնար է դառնում պոտենցիալ արտակարգ իրավիճակների դեպքում ազդարարման և արձագանքման նպատակային միջոցառումների **ժամանակին** իրականացումը.

[32] Թեև $PM_{2.5}$ կախված մասնիկների ՍԹԿ-ի նորմատիվը սահմանվել է 2013 թվականին:
[33] Տուգանքների չափերը փոքր են և չեն բերել խախտում կատարած տնտեսվարողների վարքագծային փոփոխության:
[34] https://meteomonitoring.am/post/1344:

- **առկա չէ միջազգային չափանիշներին համապատասխանող ռեֆերենս լաբորատորիա**, որը թույլ կտար իրականացնել մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի սարքավորումների ստուգաճշտում: Բացի այդ, մոնիթորինգի մեթոդները չեն համապատասխանում ԵՄ դիրեկտիվներով սահմանված ստանդարտներին: Նշված հանգամանքները ստեղծում են հրապարակվող տվյալների որակի / հուսալիության ռիսկեր.
- **չի երաշխավորվել նաև տարածքային և բնակչության թվի տեսանկյունից դիտացանցի ներկայացուցչականությունը:** Մասնավորապես, ըստ գործող կարգավորումների, Գյումրի քաղաքում պետք է գործի առնվազն 3 դիտակետ՝ ներկայումս գործող 1-ի փոխարեն:

38. Հաշվի առնելով վերագրյալը, մթնոլորտային օդի որակի մոնիթորինգին վերագրվող՝ 2024թ.-ին կատարված 123.9 մլն դրամ ծախսերը (2023թ.-ին՝ 124.6 մլն դրամ) նպատակային արդյունավետ չեն եղել:

39. Միջազգային գործընկերների աջակցությամբ[35] մշակվել է «Հայաստանում օդի որակի մոնիթորինգի բարելավման ընդհանուր հայեցակարգ»: Վերջինս, սակայն, հաստատված չի եղել:

40. ՀՀ 2024թ. պետական բյուջեի 1016-32003 ««Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տեխնիկական միջոցների արդիականացում և նոր սարքավորումների ձեռք բերում» միջոցառման շրջանակում նախատեսված է եղել 2024թ.-ին ձեռք բերել մոնիթորինգի 2 նոր ավտոմատ դիտակայան: Միջոցառումը, սակայն, սահմանված ժամկետում չի իրականացվել, և սարքավորումները հաշվեքննության ավարտի դրությամբ դեռևս մատակարարված և շահագործման հանձնված չեն եղել: Ըստ ՇՄՆ-ի, առկա է 16 դիտակայանի / սարքավորումների ձեռքբերման կարիք, որի ֆինանսավորման նախնական գնահատականը կկազմի 2.6 մլրդ դրամ: Արդիականացման հաստատված ծրագրի և դրանում առաջնահերթ վերազինման ենթակա դիտակայանների վերազինման ժամանակագրական հաջորդականության բացակայության պայմաններում սահմանափակվում է փողի դիմաց արժեքի ստացման արդյունավետությունը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շրջակա միջավայրի նախարարությանը

41. Իրականացնել մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի համապարփակ գույքագրում՝ ըստ արտանետման աղբյուրների *(Առաջարկություն N 2)*:

42. Մշակել մթնոլորտային օդի մոնիթորինգի դիտացանցի արդիականացման ծրագիր՝ վերազինման ենթակա առաջնահերթ դիտակայանների սահմանված ժամանակագրական հաջորդականությամբ *(Առաջարկություն N 3)*:

[35] Ավստրիայի շրջակա միջավայրի գործակալության կողմից «ԵՄ-ն կլիմայի փոփոխության համար Արևելյան գործընկերության երկրներում» ՄԱԶԾ-ԵՄ տարածաշրջանային ծրագրի շրջանակում:

Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում չի իրականացվել ռազմավարական կառավարում

ԻՆՉՈ՞Ւ Է ՏՎՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԿԱՐԵՎՈՐ

43. Հաշվի առնելով աղտոտման աղբյուրների և տվյալ բնագավառին առընչվող հանրային կառավարման գործառույթների ու մարմինների բազմազանությունը, էական է ներդաշնակեցնել նրանց գործողությունները:

ՊԱՏՃԱՌՆԵՐ

44. Հաշվեքննության տվյալ արդյունքը պայմանավորող հիմնական պատճառներն են՝

- օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի նվազեցումը չի սահմանվել որպես վերջնարդյունք.
- մթնոլորտային օդ ըստ ոլորտների արտանետումների նվազեցումը չի սահմանվել որպես միջանկյալ արդյունք.
- օդի որակի բարելավման նպատակով չի ընդունվել համապարփակ ռազմավարություն և դրանից բխող միջոցառումների ծրագիր.
- տվյալ բնագավառում հանրային քաղաքականության միջոցառումների ու կառավարման գործառույթների կոորդինացման իրավական մեխանիզմ չի ներդրվել:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

45. Պայմանավորվող կողմերը … հնարավորինս սեղմ ժամկետներում մշակում են օդի աղտոտիչների արտանետումների դեմ պայքարի քաղաքականություն և **ռազմավարություն**՝ հաշվի առնելով ազգային և միջազգային մակարդակների վրա արդեն գործադրվող ջանքերը:

Աղբյուր՝ Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին կոնվենցիա, հոդվ. 3:

46. Անցկացվող հետազոտությունները, տեղեկատվության փոխանակումը, մոնիտորինգը և դրանց արդյունքները, օդի աղտոտման, մասնավորապես՝ նոր կամ վերակառուցված ձեռնարկությունների գործունեության արդյունքում առաջացող օդի աղտոտման դեմ պայքարի մեջ կիրառվող տեղային և այլ միջոցների արժեքը և արդյունավետությունը, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ **պարտավորվում է մշակել լավագույն** քաղաքականությունը և **ռազմավարությունը**՝ ներառյալ օդի որակի կառավարման համակարգերը և, որպես դրանց անքակտելի մաս, օդի աղտոտման դեմ պայքարի այն միջոցները, որոնք համատեղելի են հավասարակշռված զարգացման հետ՝ մասնավորապես առկա լավագույն և տնտեսապես արդարացված, ինչպես նաև սակավամնացորդ կամ անմնացորդ տեխնոլոգիաների կիրառման միջոցով:

Աղբյուր՝ Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին կոնվենցիա, հոդվ. 6:

47. ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի **(CEPA)** համաձայն, համագործակցությունը պետք է ընդգրկի … ՀՀ համար ոլորտային այն **ռազմավարությունների մշակում** (այդ թվում՝ գործողությունների իրականացման հստակ սահմանված ժամանակացույցները և **հենանիշները**, վարչական պատասխանատվությունները, ինչպես նաև՝ ենթակառուցվածքներում ու տեխնոլոգիաներում ներդրումների ֆինանսավորման ռազմավարությունները), որոնք առնչվում են՝ *օդի որակին* (հոդվ. 48 (b) (i)):

48. Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում Կառավարության լիազորություններից է մթնոլորտային օդի պահպանության բնագավառում ռազմավարական փաստաթղթերի, հայեցակարգերի, համալիր միջոցառումների ծրագրի հաստատումը:

Աղբյուր՝ ՄՕՊՄՕ, հոդվ. 5 , մաս 1:

49. Ոլորտային ռազմավարությունները պետք է հանդիսանան այն հիմնական փաստաթղթերը, որոնք ապահովում են անհրաժեշտ հիմքեր և տեղեկատվություն բյուջետային գործընթացում ոլորտային հիմնախնդիրների, բյուջետային ծրագրերի նպատակների, վերջնական արդյունքների, պետության միջամտության հիմնական ռազմավարական ուղղությունների և առաջնահերթությունների սահմանման համար: Ռազմավարական նպատակների համար պետք է սահմանվեն իրատեսական, **որակյալ և չափելի արդյունքային ցուցանիշներ,** որոնք հետագայում հիմք կհանդիսանան ծրագրերի նպատակների չափման, կատարողականի և արդյունավետության գնահատման համար:

Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ.հունիսի 23-ի «ՀՀ-ում ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման ռազմավարության շրջանակներում մեթոդական ուղեցույցները հաստատելու մասին» թիվ 311-Ա հրամանի հավելված 6-ի 10-րդ և 18-րդ կետեր:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿ

50. Մթնոլորտային օդի որակի կառավարման / աղտոտվածության նվազեցման ռազմավարություն և դրանից բխող համալիր միջոցառումների ծրագիր չի գործել: 2023 թվականին լրացել է ՀՀ կառավարության 2018թ. մարտի 22-ի նիստի N 11 արձանագրային որոշմամբ հաստատված՝ «Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման ռազմավարության» գործողության ժամկետը, որից հետո նոր ռազմավարական փաստաթուղթ չի մշակվել[36]: Ավելին, նշված ռազմավարությունն ինքնին չի պարունակել թիրախներ և ըստ աղտոտման աղբյուրների *համալիր* միջոցառումներ:

51. ՀՀ-ում սահմանված չեն օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի նվազեցման թիրախներ, այդ թվում՝ ծրագրային բյուջետավորման համատեքստում: Սահմանված չեն նաև ըստ արտանետումների ոլորտների նվազեցման թիրախներ: Թիրախների բացակայությունը սահմանափակում է արդյունավետ հաշվետվողականությունը, փողի դիմաց արժեքի ստեղծման նկատմամբ խորհրդարանական վերահսկողության հնարավորությունը, չի բխում ՀՀ-ում գործող ծրագրային բյուջետավորման կարգավորումներից: Միևնույն ժամանակ, թիրախների սահմանումն է, որ պետք է հնարավորություն տա մաթեմատիկական մոդելավորման գործիքակազմի կիրառությամբ մշակել այն չափելի միջոցառումները, որոնց համախմբի իրականացումը կապահովի վաղաժամ մահերի նվազեցում և ՄՕՊՄՕ-ով սահմանված նպատակների իրագործում:

[36] Ռազմավարությունը փաստացի ավելի վաղ է գործողությունը դադարեցրել՝ 2021թ. արձանագրային որոշումների ուժը կորցնելով պայմանավորված:

Ներդիր 3. Թիրախների սահմանման դրական գործելակերպեր՝ ԵՄ օրինակով

Օդի աղտոտվածության նվազեցման բնագավառում ԵՄ միջոցառումները կառուցված են $PM_{2.5}$-ով պայմանավորված *վաղաժամ մահերը մինչև 2030 թվականը* ***55%-ով*** *նվազեցնելու* թիրախի շուրջ[37]:

Վերջինս նախատեսվում է ապահովել ԵՄ 2016/2284 դիրեկտիվով ԵՄ անդամ յուրաքանչյուր պետության համար սահմանված՝ ըստ աղտոտիչների (5 հիմնական աղտոտիչի գծով) արտանետումների նվազեցման թիրախների միջոցով: Օրինակ, մերձբալթյան երկրների համար դիրեկտիվով սահմանված են հետևյալ թիրախները.

Աղտոտիչ	Էստոնիա		Լատվիա		Լիտվա	
	2020-2029թթ.	2030թ.-ից ի վեր	2020-2029թթ.	2030թ.-ից ի վեր	2020-2029թթ.	2030թ.-ից ի վեր
$PM_{2.5}$	15%	41%	16%	43%	20%	36%
SO2	32%	68%	8%	46%	55%	60%
NOx	18%	30%	32%	34%	48%	51%
NMVOC	10%	28%	27%	38%	32%	47%
NH_3	1%	1%	1%	1%	10%	10%

Ծանոթություն. Թիրախները ենթադրում են արտանետումների նվազեցում 2005թ. բազային տարվա համեմատ: 2020-2029թթ. թիրախները համահունչ են «Մեծ հեռավորությունների վրա օդի միջսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիայի Գոթենբուրգի վերանայված արձանագրությամբ նախատեսված թիրախներին:

Դիրեկտիվը պահանջում է, որ անդամ պետությունները.

- իրականացնեն հիմնական աղտոտիչների գծով *արտանետումների գույքագրում.*
- ընդունեն *օդի աղտոտվածության նկատմամբ հսկողության ազգային ծրագրեր*, որոնք ցույց կտան, թե երկրներն ինչպես են հասնելու արտանետումների նվազեցման 2020-2029թթ. հանձնառություններին և 2030թ.-ից հետո սահմանված ավելի հավակնոտ հանձնառություններին:

Հարկ է նկատել, որ ԵՄ-ում օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի նվազեցման թիրախի սահմանումը և դրանց հասնելուն ուղղված ռազմավարական կառավարումը տվել է շոշափելի արդյունքներ. 2005-2022 թվականների ընթացքում ԵՄ-ում օդի աղտոտվածությամբ ($PM_{2.5}$) պայմանավորված վաղաժամ մահերի թիվը կրճատվել է 45%-ով՝ մոտենալով 2030 թվականին համար սահմանված 55%-ով կրճատման թիրախի ապահովմանը:

Աղբյուր՝ *Վաղաժամ մահերին վերաբերելի թիրախների մասով՝ https://environment.ec.europa.eu/topics/air_en, EU Action Plan: 'Towards Zero Pollution for Air, Water and Soil', Brussels, 12.5.2021, COM(2021) 400 final, Աղտոտիչներին վերաբերելի թիրախների մասով՝ ԵՄ 2016/2284 դիրեկտիվ, https://environment.ec.europa.eu/topics/air/reducing-emissions-air-pollutants_en, https://www.eea.europa.eu/en/topics/in-depth/air-pollution:*

[37] 2005 թվականի բազային տարվա համեմատությամբ:

52. Չնայած ՄՕՊՄՕ պահանջին[38], մարզերի բնապահպանական ծրագրերի կազմում մթնոլորտային օդի պահպանության միջոցառումներ նախատեսված չեն:

53. Մթնոլորտային օդի որակի պլանների մշակման, դրանց բովանդակության, թարմացման, կատարման վերաբերյալ հաշվետվողականության և այլ պահանջներ ազգային օրենսդրությամբ սահմանված չեն:

54. Շահագրգիռ և պատասխանատու պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները կոորդինացնող իրավական մեխանիզմներ ներդրված չեն: ՀՀ համայնքներից միայն Երևանի քաղաքապետարանն է 2025 թվականին մշակել օդի որակի բարելավման ծրագիր, որը, սակայն ՇՄՆ-ի հետ նախապես չի համաձայնեցվել[39]: Ծրագիրը չի պարունակում չափելի թիրախներ, ինչպես նաև միջոցառումների իրականացման ֆինանսական գնահատական (բյուջե):

55. Օդի որակին միտված ոլորտային միջոցառումների ազդեցության գնահատումներ չեն իրականացվում, որոնք թույլ կտային վերլուծել իրականացվող միջոցառումների արդյունավետությունը և իրականացնել ընթացիկ ճշգրտումներ՝ սահմանված նպատակներին հասնելու համար:

56. Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանում օդի պահպանության բնագավառում համալիր ծրագիր չի գործել: Այս համատեքստում դրական է ՇՄՆ-ի կողմից 2025-2030թթ. համար նման ծրագրի մշակման աշխատանքների մեկնարկը: Այնուհանդերձ, առկա **նախագիծը չի պարունակում թիրախներ, ինչպես նաև աղտոտման աղբյուրների ողջ սպեկտրը բովանդակող, համապարփակ միջոցառումներ**: Օրինակ՝

- նախատեսված չեն միջոցառումներ տրանսպորտից արտանետումների նվազեցման համար: Առկա չեն գնահատումներ, թե Հանրապետության տրանսպորտային պարկի և դրա նկատմամբ հսկողության առկա վիճակը (տրանսպորտային միջոցների տարեթիվ, շարժիչի տեսակ, շարժիչի հզորություն, ըստ ԵՎՐՈ ստանդարտների մեքենաների թիվ, էլ. տրանսպորտի տեսակարար կշիռ, չեզոքացուցիչների առկայություն և սարքինություն, տեխզննության գործընթացի արդյունավետություն և այլն) ինչպիսի ազդեցություն է ունենում ՀՀ-ում օդի աղտոտվածության վրա: Ըստ ՏԿԵՆ-ի, 2024թ. տեխնիկական զննություն անցած 533128 տրանսպորտային միջոցներից անսարք է ճանաչվել 232-ը կամ 0.04%-ը: Հատկանշական է, որ օդի աղտոտվածության տեսանկյունից նշանակալի պարամետրերի[40] համար սահմանված պահանջներին չհամա-

[38] Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:
[39] Ըստ ՇՄՆ-ից 31.03.25թ.-ին ստացված տեղեկատվության:
[40] Բենզինային և գազաբալոնային շարժիչի բանած գազերում վնասակար նյութերի (ածխածնի օքսիդի՝ CO, ածխածնի դիօքսիդի՝ CO2 ածխաջրածինների՝ CH, ազոտի օքսիդների՝ NOx) պարունակության ստուգում (601) Դիզելային շարժիչի ծխայնության ստուգում և ազոտի օքսիդների՝ Nox, ածխածնի օքսիդի՝ CO, ածխաջրածինների՝ CH պարունակության ստուգում (602)Չեզոքացուցիչների առկայության և սարքինության բանած գազերի արտածման համակարգի համալրվածության և այրվածքների, մեխանիկական ծակվածքների ու անկիպությունների առկայության ստուգում (604):

պատասխանելու հիմքով տրանսպորտային միջոցների անսարք ճանաչվելու փաստեր չեն արձանագրվել: Ըստ ՏԿԵՆ-ի, տեխնիկական զննության կայանների կողմից աշխատանքային կարգով ներկայացված տեղեկատվության համաձայն, 2021-2023թթ. ընթացքում ավտոտրանսպորտային միջոցների արտանետումների մակարդակի և ծխայնության չափման արդյունքում ՀՀ-ում որևէ տրանսպորտային միջոց անսարք չի ճանաչվել: Բացակայել են չեզոքացուցիչների առկայության և սարքինության ստուգման վերաբերյալ տվյալներ: Թեև օրենսդրությունը սահմանում է[41] Ոստիկանության ու բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի աշխատակիցների կողմից ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումներ իրականացնելու նպատակով տրանսպորտային միջոցներ կանգնեցնելու ընթացակարգ և չափումների հիման վրա վտանգավոր տրանսպորտային միջոցների շահագործումն արգելելու հնարավորություն, որևէ նման պահանջ (հաղորդում) տեսչական մարմնի կողմից Ոստիկանությանը 01.01.2023թ.-ից մինչև 28.02.2025թ. ընկած ժամանակահատվածը չի ներկայացվել: Սահմանափակ տվյալների ու թույլ հսկողության պայմաններում, սահմանափակվում է օդի աղտոտվածության տեսանկյունից նշանակալի համարվող տվյալ ոլորտից արտանետումների կառավարման գործընթացի արդյունավետությունը:

- նախատեսված չեն միջոցառումներ՝ ուղղված արդյունաբերությունից արտանետումների նվազեցմանը, այդ թվում՝ լավագույն հասանելի տեխնոլոգիաների ներդրման մասով: Արտանետման անշարժ աղբյուրներից անջատված վնասակար նյութերի քանակը կազմել է 380.2 հազ. տ, որի 69.3%-ը որսվել է, մնացած 30.7%-ը՝ արտանետվել մթնոլորտ[42]: Պլանավորվող լավագույն հասանելի տեխնոլոգիաների՝ մթնոլորտ արտանետումների կրճատման վրա քանակական ազդեցության գնահատում չի իրականացվել:
- նախատեսված չեն տնային տնտեսություններից արտանետումների գնահատման ու նվազեցման միջոցառումներ, այդ թվում՝ ջեռուցումից առաջացող արտանետումների մասով:
- նախատեսված չեն գյուղատնտեսությունից արտանետումների գնահատման ու նվազեցման միջոցառումներ: Այդ համատեքստում էական է գյուղատնտեսության բնագավառում իրականացվող պետական աջակցության (սուբսիդավորման) ծրագրերի բնապահպանական արդյունավետությունը: Առկա չեն ոլորտային քաղաքականության միջոցառումների՝ օդի աղտոտվածության վրա ազդեցության գնահատման մեխանիզմներ (օրինակ, սուբսիդավորման ծրագրերի միջոցով պարարտանյութերի օգտագործումն անուղղակիորեն խթանելու հնարավոր ազդեցությունը ամոնյակի, ապա նաև՝ կախված մասնիկների կոնցենտրացիայի վրա):

[41] Կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2410-Ն որոշման հավելվածի 4-րդ և 6-րդ կետեր:
[42] Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2023թ, 2024, ՎԿ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շրջակա միջավայրի նախարարությանը

57. Սահմանել օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի նվազեցման[43], ինչպես նաև դրա համար անհրաժեշտ՝ ըստ աղտոտման աղբյուրների արտանետումների նվազեցման թիրախային ցուցանիշներ և դրանց հասնելու վերջնաժամկետներ՝ դրանք ընդգրկելով ծրագրային բյուջետավորման համատեքստում արդյունքային ցուցանիշների կազմում *(Առաջարկություն N 4)*:

58. Ազդեցության քանակական գնահատումների և սցենարային վերլուծությունների հիման վրա[44], ըստ անհրաժեշտության՝ միջազգային տեխնիկական աջակցությամբ, մշակել օդի որակի բարելավման ազգային ռազմավարություն և դրանից բխող համալիր միջոցառումների ծրագիր, որը թույլ կտա հասնել վերոնշյալ թիրախներին ծախսարդյունավետ եղանակով *(Առաջարկություն N 5)*:

59. Մշակել օդի որակի բարելավման մարզային և համայնքային պլանների պահանջներ, այդ թվում՝ դրանց բովանդակության, ազգային պլանի հետ ներդաշնակեցման, կատարման վերաբերյալ հաշվետվողականության *(Առաջարկություն N 6)*:

60. Ներդնել օդի պահպանության բնագավառում հանրային կառավարման տարբեր մարմինների կողմից իրականացվող միջոցառումների կոորդինացման (ուղղահայաց և հորիզոնական) իրավական մեխանիզմ *(Առաջարկություն N 7)*:

[43] ԱՆ-ի հետ փոխհամաձայնեցված:
[44] Առաջարկություն N2-ի կատարմամբ ձևավորված հնարավորինս ամբողջական գույքագրման արդյունքների օգտագործմամբ:

Եզրակացություն

61. Հաշվի առնելով օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի հարաբերականորեն բարձր մակարդակը, ինչպես նաև դրա նվազեցմանն ուղղված, տվյալահեն, համապարփակ ռազմավարական միջոցառումների բացակայությունը, օդի աղտոտվածության նվազեցմանն ուղղված հանրային կառավարման գործընթացում չի ապահովվել նպատակային արդյունավետություն:

Առաջարկություններ և արձագանք

ԱՐԴՅՈՒՆՔ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ
Օդի որակի ՀՀ ստանդարտները չեն ապահովում օդի աղտոտվածությունից մարդու կյանքի ու առողջության բավարար պաշտպանություն	*Շրջակա միջավայրի նախարարությանը՝* Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի՝ ՀՀ-ում գործող ստանդարտների կազմն ու մակարդակը ներդաշնակեցնել ԱՀԿ-ի ուղեցույցներով առաջարկվող գիտականորեն հիմնավորված կազմին ու մակարդակներին՝ ըստ անհրաժեշտության ԱՀԿ-ի ուղեցույցներով առաջարկվող միջանկյալ թիրախների հիման վրա սահմանելով անցումային ժամկետներ ***(Առաջարկություն N 1):*** ***Շրջակա միջավայրի նախարարության արձագանք*** ԱՀԿ-ի կողմից հաստատված, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության տեսանկյունից գնահատված, հիմնական աղտոտիչների սահմանային թույլատրելի խստացված նորմերին հասնելու համար երկրներին առաջարկվում է նորմերի տեղայնացում փուլային տարբերակով: ՀՀ-ում 2006թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ սահմանված՝ ԱՀԿ-ի կողմից առաջարկվող հիմնական աղտոտիչների ՍԹԿ-ները բավականաչափ խիստ են և գտնվում են ԱՀԿ-ի կողմից առաջարկվող անցումային փուլերի 3-րդ և 4-րդ փուլերի միջակայքում, ավելին՝ հիմնական աղտոտիչ համարվող ածխածնի մոնօքսիդի (CO) ազգային օրենսդրությամբ սահմանված ՍԹԿ-ն առավել խիստ է, քան ԱՀԿ-ի կողմից առաջարկվող խստացված նորմը: Միաժամանակ հայտնում եմ, որ Վարչապետի 2023թ. մարտի 27-ի «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N343–Ա որոշման 9-րդ կետի հանձնարարականի շրջանակներում ներկայումս ՀԲ աջակցությամբ միջազգային փորձագիտական խմբի կողմից մշակվում են Հայաստանում օդի որակի գնահատման չափանիշները՝ համապատասխանեցնելով ԵՄ օդի որակի դիրեկտիվի և ԱՀԿ-ի առաջարկվող

պահանջներին:

Հաշվեքննողների մեկնաբանություն

Փուլային տարբերակով ԱՀԿ-ի օդի որակի ուղենիշներին հասնելու դիտարկումն ընդունելի է: Այդ հանգամանքն արտացոլված է եղել սույն առաջարկության ձևակերպման մեջ՝ «ըստ անհրաժեշտության ԱՀԿ-ի ուղեցույցներով առաջարկվող միջանկյալ թիրախների հիման վրա սահմանելով վերջիններիս կիրառության անցումային ժամկետներ» արտահայտությամբ: Սույն ընթացիկ եզրակացության Ներդիր 2-ում որպես դրական գործելակերպ ներկայացված է ԵՄ մոտեցումը, որը նախատեսում է ԱՀԿ վերջնական թիրախներին հասնել 2030թ.-ից հետո, առավելագույնը մինչև 2050թ. (Դիրեկտիվի 12-րդ հոդվածի 4-րդ մաս, Հավելված 2)՝ մինչ այդ սահմանելով մինչև 2026թ. և 2030թ. համար սահմանային արժեքներ:

ՀՀ-ում սահմանված ՍԹԿ-ները բավականաչափ խիստ լինելու և ԱՀԿ-ի կողմից առաջարկվող անցումային փուլերի 3-րդ և 4-րդ փուլերի միջակայքում գտնվելու Նախարարության մեկնաբանության վերաբերյալ հարկ է արձանագրել, որ ՀՀ օրենսդրական դաշտում բացակայում է *տարեկան* միջին կոնցենտրացիաների սահմանումը, ինչպես նաև սահմանված չէ, թե տարեկան *քանի օր* կարող է տեղի ունենալ օրական ՍԹԿ-ի գերազանցում: Այսպիսի մեթոդաբանական բացի պայմաններում, ինչպես ներկայացված է սույն ընթացիկ եզրակացության 20-21-րդ կետերում և Գծապատկեր 5-ում, ՀՀ օդի որակի ստանդարտների սահմանափակ կազմը կարող է հանգեցնել նրան, որ ՀՀ-ում գործող ՍԹԿ-ներին ամբողջությամբ բավարարելու պայմաններում, օդի աղտոտվածությամբ պայմանավորված մահերի հիմնական պատճառ հանդիսացող $PM_{2.5}$ աղտոտիչի տարեկան ցուցանիշը 700%-ով ավելի թույլ լինի ԱՀԿ-ի կողմից առաջարկվող՝ մարդու առողջության տեսանկյունից ընդունելի, գիտականորեն հիմնավորված մակարդակից, իսկ NO_2-ինը և PM_{10}-ինը՝ լինեն 400%-ով ավելի թույլ:

Հետևաբար, միայն օրական միջին ՍԹԿ-ների հիման վրա կատարված համեմատությունը ԱՀԿ ուղեցույցների միջանկյալ փուլերի հետ՝ որպես չափանիշների խստության գնահատման չափանիշ, կարող է ապահովել թերի պատկերացում և չարտացոլել ՄՕՊՄՕ-ով ՍԹԿ-ի սահմանման տեսանկյունից (մթնոլորտային օդում աղտոտող (վնասակար) նյութի այն առավելագույն պարունակությունը, որը չգերազանցելու դեպքում այդ նյութը ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգործելիս **բացասական ազդեցություն չի գործում մարդու առողջության** և բնական ու մարդածին շրջակա միջավայրի **վրա**) գործող ՍԹԿ-ների անհամարժեքությունը:

Առկա չեն ժամանակին, որակյալ և համապարփակ տվյալներ՝ օդի պահպանության արդյունավետ կառավարում իրականացնելու համար

Շրջակա միջավայրի նախարարությանը՝

Իրականացնել մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի համապարփակ գույքագրում՝ ըստ արտանետման աղբյուրների ***(Առաջարկություն N 2):***

Շրջակա միջավայրի նախարարության արձագանք

Անշարժ աղբյուրներից մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների գույքագրումն իրականացվում է 2024թ. հունվարի 4-ի Կառավարության N23-Ն որոշմամբ սահմանված կարգով վարչական վիճակագրական հաշվետվությունների հիման վրա (հաշվառման են ենթակա իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, որոնք ունեն մթնոլորտային արտանետումների անշարժ աղբյուրներ, և դրանց գործունեության հետևանքով առաջացող աղտոտող նյութերի արտանետումների առավելագույն նախագծային ցուցանիշների հիման վրա հաշվարկված օդի պահանջվող օգտագործումը տարեկան կտրվածքով գերազանցում է 200 մլն խոր. ցուցանիշը):

Շարժական աղբյուրներից արտանետումների գույքագրումն իրականացվում է ներմուծված վառելիքի հիման վրա:

2024թ. հունվարի 4-ի կառավարության N23-Ն որոշմամբ սահմանած կարգով հաշվառման ոչ ենթակա աղբյուրների համար (թափոններ, տնային տնտեսություն, գյուղատնտեսություն և այլն) գույքագրումն իրականացվում է «Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիայի շրջանակներում և յուրաքանչյուր տարի ներկայացվում է կոնվենցիայի քարտուղարություն:

Հաշվեքննողների մեկնաբանություն

Ինչպես ներկայացած է սույն ընթացիկ եզրակացության 31-32-րդ կետերում, թե՛ Նախարարության կողմից նշված վարչական վիճակագրական հաշվետվությունների ամփոփմամբ ստացված տվյալները, թե՛ «Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիայի շրջանակում իրականացված գույքագրման արդյունքները համապարփակ չեն:

Սույն առաջարկության իրականացումն անհրաժեշտ նախադրյալ է՝ ըստ արտանետման աղբյուրների հասցեական, ապացույցների վրա հիմնված քաղաքականության միջոցառումների մշակման գործընթացի արդյունավետությունն ապահովելու համար:

Շրջակա միջավայրի նախարարությանը՝

Մշակել մթնոլորտային օդի մոնիթորինգի դիտացանցի արդիականացման ծրագիր՝ վերազինման ենթակա առաջնահերթ դիտակայանների սահմանված ժամանակագրական հաջորդականությամբ ***(Առաջարկություն N 3):***

Շրջակա միջավայրի նախարարության արձագանք

ՇՄՆ կողմից 2025թ. փետրվարի 18-ից (գտնվում է հաշվեքննությունն

	ընդգրկվող ժամանակաշրջանում) սահմանված կարգով շրջանառվել է «Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում 2025-2030թթ. համալիր միջոցառումների ծրագիրը, որի 1-ին կետով նախատեսված է «Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի արդիականացման և միջազգային չափանիշներին համապատասխանեցման» միջոցառում: Միջոցառման համար հիմք է հանդիսացել Ավստրիայի Շրջակա միջավայրի գործակալության կողմից «ԵՄ-ն կլիմայի փոփոխության համար Արևելյան գործընկերության երկրներում» ՄԱԶԾ-ԵՄ տարածաշրջանային ծրագրի շրջանակներում մշակված «Հայաստանում օդի որակի մոնիթորինգի բարելավման ընդհանուր հայեցակարգը»: Միջոցառումների ծրագրի 1-ին կետում ներառված է անհրաժեշտ 14 անշարժ և 2 շարժական դիտակայանների ձեռքբերում՝ համապատասխան ֆինանսական գնահատմամբ, քիմիական լաբորատորիայի արդիականացում՝ ներառելով նաև օրգանական աղտոտիչների և փոշու մեջ ծանր մետաղների դիտարկման հնարավորություն՝ ֆինանսական գնահատմամբ, ռեֆերենս լաբորատորիայի ձեռքբերում և օդի որակի մոդելավորման, կանխատեսման գործիքակազմի ստեղծում: Անշարժ դիտակայանների ձեռքբերման հայտը ներկայացվել է ՇՄՆ ՀՀ 2026-2028թթ. ՄԺԾԾ-ի «Նոր նախաձեռնությունների» մասով բյուջետային ֆինանսավորման հայտերում՝ յուրաքանչյուր տարի 2 կայանի ձեռք բերման առաջարկով: ***Հաշվեքննողների մեկնաբանություն*** Դրական է արձանագրել հաշվեքննության կատարման ընթացքում խնդրո առարկային վերաբերելի ծրագրի մշակման ուղղությամբ առաջընթացը: Այնուհանդերձ, դեռևս չհաստատված վկայակոչված փաստաթղթում սահմանված չէ մոնիթորինգի դիտացանցի վերազինման ենթակա դիտակայանների տեղակայման ժամանակագրական հաջորդականությունը՝ ըստ առաջնահերթությունների: Արդիականացման հաստատված ծրագրի և դրանում առաջնահերթ վերազինման ենթակա դիտակայանների վերազինման ժամանակագրական հաջորդականության բացակայության պայմաններում սահմանափակվում է փողի դիմաց արժեքի ստացման արդյունավետությունը:
Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում չի իրականացվել ռազմավարական կառավարում	*Շրջակա միջավայրի նախարարությանը՝* Սահմանել օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի նվազեցման[45], ինչպես նաև դրա համար անհրաժեշտ՝ ըստ աղտոտման աղբյուրների արտանետումների նվազեցման թիրախային ցուցանիշներ և դրանց հասնելու վերջնաժամկետներ՝ դրանք ընդգրկելով ծրագրային բյուջետավորման համատեքստում արդյունքային ցուցանիշների կազմում ***(Առաջարկություն N 4):*** ***Շրջակա միջավայրի նախարարության արձագանք*** Կետի կատարման հնարավորության հարցը անհրաժեշտ է քննարկել ԱՆ-ի հետ պարզելու համար՝ արդյոք գոյություն ունի հաստատված մե-

[45] ԱՆ-ի հետ փոխհամաձայնեցված:

թոդաբանություն, որով բացահայտվում է օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի ցուցանիշների ուղղակի կամ անուղղակի կապը օդի աղտոտվածության ցուցանիշների հետ:

Հաշվեքննողների մեկնաբանություն

Միջազգային պրակտիկայում առկա են և գործնականում կիրառվում են ազդեցության գնահատման մաթեմատիկական գործիքակազմեր, այդ թվում Եվրոպայի բնապահպանական գործակալության կողմից: Միաժամանակ, առաջարկի կատարման ընթացքը կշահի ԱՆ-ի հետ փոխհամաձայնեցված կերպով դրա իրականացումից:

Շրջակա միջավայրի նախարարությանը՝

Ազդեցության քանակական գնահատումների և սցենարային վերլուծությունների հիման վրա[46], ըստ անհրաժեշտության՝ միջազգային տեխնիկական աջակցությամբ, մշակել օդի որակի բարելավման ազգային ռազմավարություն և դրանից բխող համալիր միջոցառումների ծրագիր, որը թույլ կտա հասնել վերոնշյալ թիրախներին ծախսարդյունավետ եղանակով ***(Առաջարկություն N 5):***

Շրջակա միջավայրի նախարարության արձագանք

Հիմք ընդունելով փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի 2023թ. սեպտեմբերի 8-ի N03.8/31094 հանձնարարականը, շրջակա ՇՄՆ-ն նախաձեռնել է մշակել մեկ միասնական՝ «Շրջակա միջավայրի պահպանության ռազմավարություն» համապարփակ փաստաթուղթ, որն իր մեջ կներառի նաև շրջակա միջավայրի ոլորտի տարբեր բաղադրիչների նախատեսվող ռազմավարությունները՝ առանձին հավելվածների տեսքով, այդ թվում՝ Սևանա լճի, կենսաբազմազանության, մթնոլորտային օդի պահպանության, անտառային քաղաքականության և այլն: Կառավարության 2021թ. նոյեմբերի 18-ի «ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշման հավելված 1-ի 17.1 կետի համաձայն, ռազմավարության մշակման համար ժամկետ է սահմանված 2026թ. մարտի 3-րդ տասնօրյակը:

Հաշվեքննողների մեկնաբանություն

Մթնոլորտային օդի պահպանության ռազմավարության հաստատումը՝ ինչպես առանձին իրավական ակտով, այնպես էլ՝ որպես առավել համապարփակ ռազմավարական փաստաթղթի հավելվածի տեսքով, կարող են ընդունելի լինել տվյալ առաջարկության կատարման համատեքստում:

Այնուհանդերձ, հարկ է ընդգծել, որ ձևակերպված առաջարկությունը ոչ այնքան միտված է «ռազմավարություն» անվանումը պարունակող փաստաթղթի առկայությանը, որքան այն էական պարամետրերին, որոնք անհրաժեշտ են գործունակ և արդյունավետ ռազմավարության համար: Մասնավորապես, էական է, որ.

[46] Առաջարկություն N2-ի կատարմամբ ձևավորված հնարավորինս ամբողջական գույքագրման արդյունքների օգտագործմամբ:

- ողջ ռազմավարությունը և դրա միջոցառումները միաժամանակ և՛ բխեն օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի նվազեցման թիրախային ցուցանիշից, և՛ միտված լինեն տվյալ ցուցանիշի ապահովմանը.
- մաթեմատիկական մեթոդների ու մոդելների կիրառությամբ գնահատվեն ըստ ոլորտների մթնոլորտային օդ արտանետումների կրճատման այն թիրախային մակարդակները, որոնց ապահովումը կերաշխավորի նախորդ կետով սահմանված՝ օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի նվազեցման քանակական թիրախային ցուցանիշի ապահովումը.
- ազդեցության գնահատման մաթեմատիկական մեթոդների ու մոդելների կիրառությամբ մշակվեն ըստ ոլորտների այն միջոցառումները, որոնց իրականացումը կերաշխավորի նախորդ կետով սահմանված՝ ոլորտային արտանետումների նվազեցման թիրախային ցուցանիշների ապահովումը.
- իրականացվեն սցենարային վերլուծություններ՝ ընտրելու համար սահմանված թիրախին հասնելու ամենաածախսարդյունավետ միջոցառումներից կազմված ծրագիրը.
- ձևավորվեն վերոնշյալ քայլերի իրականացման համար անհրաժեշտ կարողություններ՝ ըստ անհրաժեշտության միջազգային տեխնիկական աջակցությամբ և այլն:

Հարկ է նկատել, որ ԵՄ-ում օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի նվազեցման թիրախի սահմանումը և դրանց հասնելուն ուղղված ռազմավարական կառավարումը տվել է շոշափելի արդյունքներ. 2005-2022 թվականների ընթացքում ԵՄ-ում օդի աղտոտվածությամբ ($PM_{2.5}$) պայմանավորված վաղաժամ մահերի թիվը կրճատվել է 45%-ով՝ մոտենալով 2030 թվականին համար սահմանված 55%-ով կրճատման թիրախի ապահովմանը:

Շրջակա միջավայրի նախարարությանը՝

Մշակել օդի որակի բարելավման մարզային և համայնքային պլանների պահանջներ, այդ թվում՝ դրանց բովանդակության, ազգային պլանի հետ ներդաշնակեցման, կատարման վերաբերյալ հաշվետվողականության ***(Առաջարկություն N 6)***:

Շրջակա միջավայրի նախարարության արձագանք

Մեկնաբանություններ առկա չեն եղել:

Շրջակա միջավայրի նախարարությանը՝

Ներդնել օդի պահպանության բնագավառում հանրային կառավարման տարբեր մարմինների կողմից իրականացվող միջոցառումների կոորդինացման (ուղղահայաց և հորիզոնական) իրավական մեխանիզմ ***(Առաջարկություն N 7)***:

Շրջակա միջավայրի նախարարության արձագանք

Մեկնաբանություններ առկա չեն եղել:

Հաշվեքննիչ պալատը շարունակաբար կգնահատի հաշվեքննությամբ ձևակերպված 7 առաջարկությունների կատարման ընթացքը և առաջընթացի մասին պարբերաբար կտեղեկացնի հանրությանը, Ազգային ժողովին և Կառավարությանը:

Հաշվեքննության մասին

62. Կատարողականի հաշվեքննության թեմաները ձևակերպվում են ռազմավարական գործընթացի արդյունքում՝ հիմնվելով արտաքին պետական հաշվեքննության միջնաժամկետ առաջնահերթությունների[47] վրա: Թեմաների ընտրությունը կատարվում է՝ ելնելով դրանց էականությունից, բարելավման ներուժից և հաշվեքննելիությունից:

63. Կատարողականի հաշվեքննությունը պլանավորվում, իրականացվում և արդյունքներն ամփոփող հաշվետվությունը կազմվում է՝ առաջնորդվելով աուդիտորական էթիկայի սկզբունքներով և մասնագիտական ստանդարտներով[48], որոնց առանցքային բաղադրիչներից են՝

- սահմանել կատարողականի գնահատման հուսալի չափանիշներ՝ հիմնված օրենսդրության և միջազգային լավագույն փորձի վրա: Չափանիշները ցույց են տալիս, թե հաշվեքննության առարկան ինչպիսի պայմանների պետք է բավարարի, որպեսզի հնարավոր լինի ապահովել բարձր կատարողական: Չափանիշները հաշվեքննության իրականացման փուլի մեկնարկին քննարկվում են հաշվեքննության ենթակա մարմնի հետ.

- հավաքել հաշվեքննության բավարար (քանակապես) և համապատասխան (որակապես) ապացույցներ.

- ներկայացնել հաշվեքննության արդյունքները՝ առկա իրավիճակը հաշվեքննության չափանիշների հետ համեմատելու հիման վրա.

- վեր հանել հաշվեքննության արդյունքը պայմանավորող պատճառներն ու հետևանքները: Բացահայտված պատճառները կարևոր են բարելավման առաջարկությունների ուղենշման համար, իսկ հետևանքները՝ նպատակ են հետապնդում հաշվետվությունն օգտագործողներին ներկայացնել հաշվեքննության առաջարկությունների կատարման անհրաժեշտության հիմնավորումները.

- եզրակացնել հաշվեքննության արդյունքի համար ձևակերպված նպատակի շրջանակում.

- առաջարկներ ներկայացնել հաշվեքննության առարկայի հիմնախնդիրները լուծելու և կատարողականը բարելավելու ուղղությամբ:

---

[47] Հաստատվել է Հաշվեքննիչ պալատի 27.11.2024թ. թիվ 117-Լ որոշմամբ:

[48] Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի «Կատարողականի հաշվեքննության մեթոդաբանության» համաձայն՝ հիմնված «ISSAI 100 - Հանրային հատվածում աուդիտի հիմնարար սկզբունքները»

64. Հաշվեքննիչ պալատը Հաշվետվության հաստատումից հետո իրականացնում է հետհսկողություն՝ պարբերաբար հանրությանը, Ազգային ժողովին և Կառավարությանը ներկայացնելով տեղեկատվություն հաշվեքննության առաջարկությունների կատարման ընթացքի վերաբերյալ:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

65. Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի 2024թ. հունվարի 30-ի թիվ 15-Ա որոշմամբ հաստատված առաջադրանքի հիման վրա: Հաշվեքննիչ պալատի 2024թ. գործունեության ծրագրի 2-րդ մասի 7-րդ ծրագրային կետը կատարվել է հաշվեքննության 2024-2026թթ. միջնաժամկետ առաջնահերթություններից 3.1-րդ ուղղությունն իրագործելու նպատակով:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄԸ

66. Առարկան. Օդի աղտոտվածության նվազեցում:

67. Նպատակը. Տվյալ հաշվեքննության նպատակն է՝ գնահատել մարդու առողջությունը օդի աղտոտվածությունից պաշտպանելուն ուղղված հանրային քաղաքականության միջոցառումների արդյունավետությունը և գնահատման արդյունքների հիման վրա ներկայացնել օդի պահպանության կառավարման համակարգի բարելավմանն ուղղված առաջարկություններ:

68. Հարցերը. Հաշվեքննության են ենթարկվել ձևակերպված նպատակից բխող հետևյալ հարցերը.

- Օդի որակի ՀՀ ստանդարտները ապահովո՞ւմ են արդյոք օդի աղտոտվածությունից մարդու կյանքի ու առողջության բավարար պաշտպանություն.
- Առկա՞ են արդյոք ժամանակին, որակյալ և համապարփակ տվյալներ՝ օդի պահպանության արդյունավետ կառավարում իրականացնելու համար.
- Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում իրականացվե՞լ է արդյոք արդյունավետ ռազմավարական կառավարում:

69. Մոտեցումը. Կատարողականի հաշվեքննությունն իրականացվել է *համակարգին և խնդրին միտված* մոտեցումներով:

և «ISSAI 300 - Կատարողականի աուդիտի սկզբունքները» աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային ստանդարտների վրա:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱԿԱ ՄԱՐՄԻՆԸ

70. Հաշվեքննության ենթակա մարմինը (օբյեկտը) Շրջակա միջավայրի նախարարությունն է:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

71. Որպես հաշվեքննության չափանիշների աղբյուրներ են դիտարկվել հաշվեքննության առարկային վերաբերելի ՀՀ օրենսդրությունն ու միջազգային լավագույն փորձը, այդ թվում՝ մարդու առողջության տեսանկյունից հաշվեքննության առարկայի առնչությամբ գլոբալ առաջնորդություն ստանձնած մարմնի՝ ԱՀԿ-ի ուղեցույցները:

72. Ընտրված չափանիշները ներկայացված են հաշվեքննության յուրաքանչյուր արդյունքին կից:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

73. Հաշվեքննությունն ընդգրկել է 2023թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. փետրվարի 28-ը ներառող ժամանակաշրջանը: Հաշվեքննությունը կատարվել է 2024 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի ապրիլի 15-ն ընկած ժամանակահատվածում:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԽՈՒՄԲԸ

74. Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի կատարողականի հաշվեքննության վարչության կողմից, որի աշխատանքները համակարգել է Հաշվեքննիչ պալատի նախագահ Ատոմ Ջանջուղազյանը:

Ատոմ Ջանջուղազյան
Հաշվեքննիչ պալատի նախագահ
15 ապրիլի, 2025 թվական
Հաշվեքննիչ պալատ
Բաղրամյան 19, ք. Երևան
Հայաստանի Հանրապետություն

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՄԱՐԴԱԿԵՆՏՐՈՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՒԺԵՂ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Բաղրամյան 19
www.armsai.am, secretariat@armsai.am